

Ընդ գերապանծ վեհդ օրինօք .
Ծերք միայն , մատաղ մանկտի , եւ ապիկարք չարաբախտ :
Իմ հազիւ նըշմարեն աչք անդ առ բիւրուք արդարօք
Զոյդ ճակատուց պըսակազարդ :

Զի եղև մեղապարտ ազգաց խուժան ամբոխին
Իւ Սիոնի ծածկէին դաշտք :
Խօսեցաւ Ամենակալն . ընդ բարբառոյն ահագին
Ի դըժոխոց սուզան յատակ :
Անդանօր դատապարտեալ անկանին քոյր եւ եղբայր ,
Ծընողն ընդ որդւոյն , ի միասին դուստր եւ մայր .
Բարեկամք եւ տարփաւորք եւ ամուսինն եւ փեսայն .
Թագաւորք եւ մարդեղյղք , աղատատեարք եւ ծառայք .
Փաղանդ չարագործաց յայտանախատ խայտառակ ,
Եւ մատնեալք յաւէժաբար աստուածասաստ բարկութեան :

Հուսկ ի վերջէ փայլէ արդարն յաղթազգեաց .
Եւ յերկար պատերազմացն՝ ի ծոց Էին անմահի
Հանգչի խաղաղ , շուրջ պարուրեալ ի փառաց :
Ի վայելս իւր պատարուն բընաւ ինչ չիք ցընդելի .
Տեսեալ ըզգայ եւ ճանաչէ եւ շընչէ
ԶԱստուածն ում՝ ծառայեաց , սիրեալ ըզլուծն ի սըրտէ .
Լըցեալ նովաւ՝ երգէ զբարեաց իւր պարգեւ :
Խորտակեաց յաւէժըն Տէր զումպէտ շանթիս կայծականց .
Անդ իսպառ թօթափեալ ըզգերանդին եւ ըզթեւ
Ժամանակն անշարժ լըռին նընջէ յաւերս աշխարհաց :

ԺԻԼՊԷՐ

ԹԱՐԳՄ. Հ. ՍԱՄ. ԿԱՅՍԵՐԵԱՆ

Տ Ե Ղ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Ի ՓՈՔՐ ԵՒ Ի ՄԵԾ ՀԱՅՍ

ՄՆԱՅՈՐԴՔ ԱԻԵՐԱԿԱՅ ՆԱԽՆՈՅՆ ԶՄԻՌՈՆԻՈՅ. — Թաւերակաց հին շինուածոց երևելիք են 'ի Զմիւռնիա , Դոդեակն մեծ 'ի գաղաթ լերինն Պագոսի , որ է 'ի թիկանց քաղաքին ակներև ամենայն ուստեք , և 'ի Տաճկաց կոչեցեալ Խաչուէֆէ գալէսի . որոյ 'ի հիւսիսոյ , յարեմոից և 'ի հարաւոյ անթերի կան պարիսպքն , միւսոյ կողմանն կիսով չափ բարձրութեանն և ուրեք մինչև ցյատակն կործանեալ : Ի հասարակ քարանց է բովանդակ պարիսպն ստուար թանձրութեամբ . և ուրեք ու-

րեք 'ի հիմանց փոքր մի 'ի վեր նշմարի տարբերութիւն նախնի շինուածոյն քան զկոմնենոսին, զի սա նորոգեաց միայն, այլ ոչ վայելուչ որպէս զառաջինն: Արձանագիր կայր երբեմն 'ի վերայ հիւսիսային դրանն, և երկուստեք արծիւք քանդակագործ. այլ այժմ քակեալ զտեղին 'ի բաց բարձեալ են զարձանն. և ասի թէ գրուածն էր 'ի գովեստ նորին կոմնենեայ: Արտաքոյ արեւմտեան դրանն 'ի ձախմէ կայ սպիտակ մարմարիոնեայ ստուար գլուխ Չմիւռնէ Սիբիլայի կամ Սմագոնի՝ ագուցեալ յորմն անկիւնաւոր 'ի բարձու ուղղակի հայելով որոց ընդ դուռնն անցանեն. և 'ի ներքոյ արձանին աւազան աղբեր ցամաքելոյ 'ի նոյն քարէ միակտուր, նոյնպէս ագուցեալ յորմն: Իսկ յաջակողմն նոյն դրան իբրեւ քար ընկէց մի հեռի 'ի հիւսուած պարսպին 'ի հիմանց մինչև ցվերին ծայր նորին սիւնաձև յօրինեալ է որմն, և է ջրհոր խոր և լայն. զորոյ 'ի ներքին կողմանէ գլեկին ոչ միայն 'ի ծայրէ պարսպին՝ մարթ է նշմարել զահաւոր խորութիւնն մերձ կալով բերանոյն, այլ և 'ի կէս բարձրութենէ որմոյն ընդ քարեղէն աստիճանսն ելեալ 'ի վեր. այլ առ 'ի չգոյէ յենարանի բերանոյն, և ոչ անբոյթ ոտ ընկեկեաց իրիւր յերկրորդում տեղոջն՝ վտանգաւոր է յոյժ կանգուն կալով նըշմարել 'ի խորսն, զի առ փոքր մի գլթել ոտին կամ խախտել քարին՝ վճարեալ է մարդոյ: Յարեւմտեան դրանէ աստի իբրեւ քար ընկէցիւ 'ի ներքս 'ի գլեկին է ջրամբարն՝ աւերակ 'ի միոյ կողմանէ, ընդ որ իջանեն իսկ, և է յարկն հաւասար գետնոյ աղիւսակերտ՝ կառուցեալ 'ի վերայ աղիւսեայ քառակուսի սեանց քառասնից հանդերձ որմակից կիսասիւնօք. նմին իրի և 'ի Տաճկաց կոչի Գրք-տիւրէկ. ըստ շինուածոյն և տարածութեան չէ ինչ զարմանալի: Առնթեր ջրամբարին 'ի հանդիպոյ է փոքրիկ եկեղեցի գմբէթաւոր գծուծ շինուածով, զոր Տաճիկք 'ի մզկիթ փոխեալ են, եղեալ 'ի վերայ դրանն արձանագիր տաճկերէն և սանդուխս գործեալ 'ի ներքս՝ 'ի հանդիպակաց որմն, որ է տեղի միւրապին, թէպէտ և չէ այն ուղիղ ընդ հարաւ կոյս: Այժմ աւերակ է եկեղեցիս, և միջոց տարածութեան նորա 56 քառակուսի մեզր: Որմակից է եկեղեցւոյս յաջմէ նորա և այլ շինուած աղիւսակերտ երկայնաձև ցած և միակամար կամ սագաշէն, և տարածութիւն նորա 25 մեզր քառակուսի: Յաւերական անդ 'ի պեղեն գտանին ուրեք ուրեք մանր անօթք և արձանք խեցեղէնք հեթանոսական ժամանակաց: Այլ ինչ նշանաւոր ոչ երևի, զի ամենայն հիմնայատակ կործանեալ է: Առ արեւմտեան դրանն ևեթ 'ի ձախմէ 'ի ներքս անդ պարսպին է աշտարակ բարձր հանդերձ երկաթի աղխեալ դրամբք, յորում պահին թնդանօթք և ամբարանոց վառօղի:

ԱՄՓԻԹԵԱՏՐՈՆԸ ԵՒ ԳԵՐԵՋՄԱՆ Ս. ՊՕԶԻԿԱՐՊՈՍԻ. — Արտաքոյ արեւմտեան դրանն և իբրեւ ուրմբաձիգ մի 'ի հանդիպոյ նորա 'ի բացէ առ ստորոտով Պագոս լերինն է աւնիիքեաւորունն մեծ, ուր սուրբն Պօղիկարպոս նահատակեցաւ. պարսպ ձախոյ կողմանն ամիրիթէատրոնին է ինքն լեռունն, և աջոյն որ է 'ի կողմն քաղաքին՝ կամարք. այլ այժմեան մնացորդք են հիմունք կամարացդ. յորոց 'ի ստորին ծայրի որ մերձ է 'ի թաղն Տաճկաց՝ է գերեզման սրբոյն Պօղիկարպոսի, ըստ բնական և անհոգութեան, պատուեալ ոչ միայն 'ի քրիստոնէից, այլ և 'ի Տաճկաց, զոր և կոչեն Եռառնփ տէտէ. և է տեղին փոքրիկ գերեզմանոց նոցա, յորոց միջի մեծագոյն Պօղիկարպոսի համարեալն, ամենեւին ըստ ձևոյ տաճկա.

կան գերեզմանի, և հնութեան 'ի նմա չիք ցոյց և ոչ վայելուչ նորութիւն. այլ զգերեզմանաբն փոքր տարածութեամբ երևի շուրջանակի հիմն շինուածոյ, որ գուցէ 'ի հնումն մատուռն լեալ իցէ նուիրեալ յանուն սրբոյն. իսկ 'ի գլուխ գերեզմանին է ծառ նոճեայ:

Ի հանդիպակաց լեռանն 'ի փոքրիկ տափարակի միոջ է ջրհոր նեղաբերան և լի ջրով մինչև 'ի վեր: Ի դադաթանէ լերինն երևի բովանդակ հարթ տարածութիւն նորին ընդ կողմն հարաւոյ, անբեր և քարուտ: Փոքր մի ևս անդրադոյն կան երկու անշուր գուրք անդնդախորք իբր քարընկէցիւ հեռիք 'ի միմեանց, հաւասար գետնոյ առանց շրջանակի բերանոցն. քար 'ի ներքս արկեալ՝ այլ և այլ հնչին շառաչանք մինչև ցյատակն. և ասեն ոմանք եթէ ոչ միակտուր է փորուածն որպէս զայլոց ջրհորոց, այլ 'ի զանազան ստորերկրեայ ուղիս բաժանեալ, և անտի ազգ ազգ ձայնիցն հնչեցելոց:

Ի կողմանէ հարաւոյ դղեկին իջեալ ընդ զառիվայր լերինն ընդ ահագին ապառաժս մինչև 'ի ձորամէջն, 'ի ձախոյ կողմանէ տեսանի ջրանցքն մեծ կոչեցեալ 'ի բնակչաց մեծ քեմէր, ահագին երկայնութեամբ լեռնէ 'ի լեռուն կառուցեալ 'ի վերայ երկկարգեան կամարաց երեքտասանից. գետն անցանէ ընդ միով 'ի ստորին կամարացն. և ջրանցքն են 'ի վերին ծայր կամրջին՝ որ հաղորդի 'ի հանդիպակաց լեռնէն ընդ լերինն Պագոսի. և անտի անցեալ ջրոյն ընդ ստորոտոջն Պագոսի և պատեալ զամենայն կողմն հարաւոյ և արեւելից նորին ստորերկրեայ հասարակ ագուգայիւք մտանէ 'ի քաղաքն յայլեայլ առաջս աղբերաց բաժանեալ: Շինուած կամրջին փառահեղ է և ամուր. այլ 'ի վերոյ ուր ջրանցքն են կամ առուն, յանհոգութենէ խարխարեալ են կափարիչ քարինքն. յորոց վերայ մարթ է համարձակ շրջել լեռնէ 'ի լեռուն անցանելով. զայս ջուր Քեօփրիւշիւ—օղիւս սոշոշ կոչեն: — Ի հիւսիսային կողմն Պագոսի 'ի ստորոտ նորա տեսանի մնացուած նախնի պարսպին հարուստ տարածութեամբ, յորոց 'ի միջոցին է կամար մեծ Գարա—քեմէր կոչեցեալ, և է արդ. հասարակաց ուղի ելանելոյ 'ի լեռուն: Իսկ յարեմուտս հարաւոյ նորա 'ի դաշտավայրի՝ ոչ շատ հեռի 'ի դղեկէն, երևին ցրիւ կոտորակք հին շինուածոց 'ի կճեայ քարանց՝ յարմարեալ 'ի ձև գերեզմանի Տաճկաց:

ԳԵՄԷՐ ԵՒ ԱՐՁԱՆ ԱՌԻԻՏՈՒՆ ԱՌ ՆՈՎԱԻ. — Արտաքոյ քաղաքին ուր բնակարանքն աւարտին անընդմէջ կայ կամուրջ քարաշէն միակամար, ընդ որ հարկ է անցանել ամենայն կարաւանաց. և գետն Մելէս անցանէ ընդ նովաւ, և մտեալ 'ի քաղաքն գնալով ընդ թաղն Ֆռանկաց թափի 'ի ծով: Յեզերս գետոյն առընթեր կամրջին իբր երկու ամօք յառաջ 'ի պեղելն գտաւ անդրի կճեայ առիւծու մեծի եղեալ 'ի վերայ մեծատարած սալայատակի. զայն պատկեր տեսեալ Էւրոպացոց կամեցան առնուլ, և ոչ յաջողեալ գրեցին 'ի Բիւզանդիա հրաման առնուլ 'ի Դրանէն. և եկն պատուէր թաղել վերստին 'ի տեղոջ իւրում, և թաղեցին. բայց երևին ցայսօր թիկունք նորա վերուստ 'ի վայր, իսկ գլուխն խորտակեալ է:

ՏԻՔԻԼԻ ԹԱՇ. — Ի թաղին Հրէից և Տաճկաց ուր Նեմազկեաւն է, առընթեր նորին կայ շրջափակ տեղի մեծ և անապատ. 'ի նմին կողման յայլում փորոցի կան կանգուն սիւնք վեց քառակուսիք միակտուր 'ի ծիրանեդոյն սօնաք

քարէ չափաւոր խտրոցաւ հեռիք 'ի միմեանց, որք բացօթեայ գոլով սեացեալք և խորտակեալք են. և ընդ ամենայն մեծատարած տեղին, որ արդ գերեզմանոց է Տաճկաց, կոտորակք կճեայ քարանց և սեանց ցրուեալ կան. զայս աւերակ մնացորդ ասեն տաճարին նուիրելոյ Յովհաննու Աւետարանչի:

ՄՏՈՐԵՐԿՐԵԱՅ ՃԱՆԱՊԱՐՀՔ. — Ի թաղին զոր կոչեն Արսայ մահալլէսի, և յանել փողոցին կոչեցելոյ Մադարսալը սօգագ, 'ի տան միում 'ի ներքոյ անկեան որմոյն որ 'ի մեծահատոր քարանց շինեալ է, երևի ստորերկրեայ ուղի, որ տանի ա սեն մինչև 'ի դղեակն Պազոս լերին: — Դարձեալ 'ի բարձր փողոցին զոր կոչեն Ափասո մահալէ, 'ի տան միում գոյ ստորերկրեայ ուղի անշուք շինուածով. աղիւսակերտ կամարակապ և ցած քան զմարդաչափ բարձրութիւն. նախ 13 աստիճան էջք են 'ի վայր, ուստի խտորեալ 'ի ձախ կոյս 15 քայլ, և այլ ևս 15 յաջ, յանկեան ուրեմն եղեալ կայ թղաչափ պատկեր Աստուածածնի նկարեալ 'ի վերայ տախտակի հին և խանդարեալ. և ասեն անդ գտեալ զպատկերն զայն, և կոչեն քրիֆի բաւսայիս (ծածկեալ Աստուածածին). յանկենէ անտի ջուր ծորեալ մտանէ 'ի փոքրիկ ջրամբարն որ կայ առաջի, և զեղեալ ընդ բերանն գնայ ընդ փոքր առուակն ընդ յատակաւ հանդիպակաց ուղւոյն, որ և երթալով երթայ և անձկանայ մինչև անմոտանելի լինել. և զսմանէ աւանդեն եթէ տանի հանէ 'ի դղեակ անդր:

ԳԻԻԼՈՐԷՔ ԶՄԻՆՈՒՆՈՅ. — Ի գիւղօրէս Զմիւռնիոյ նախապատիւ է ՊՈՒՌՆՈՎԱ սակս հոյակապ շինուածոց տանց, որոց նմանիք հազիւ ուրեք գտանին 'ի քաղաքին և յաղագս բազմամարդութեանն և յաճախ երթեկութեանց. եկեղեցին լատինացւոց բոլորչի և փոքրիկ է, և է 'ի ձեռս Ֆրանչիսկեան կրօնաւորաց. իսկ Յունացն մեծ և փառաւոր և արտաքուստ սիւնազարդ և կճապատ. 'ի կողմանէ աւագ դրանն երկուստեք քարաշէն սանդղօք ելանեն 'ի վերնատուն եկեղեցւոյն: Գեղեցիկք են և պարտէզք տանց մեծամեծաց: — Երկրորդ համարի գիւղն Պուճա, և Գուզլուճա երրորդ, որ է 'ի վերայ բլրոյ և սքանչելի է տեսարան նորին, դաշտավայրք պարտիզաց զառաջեաւ նորա, և լերինք 'ի հանդիպոյ: Ի կողմն Պուռնուլայի են Նաւլը քեօյ և Հաճիլէր. իսկ Սէվտի-քեօյ յարեւմտաւ կողմն քաղաքին անկանի, և զայդ անուն թերեւ 'ի դրից տեղոյն առեալ, 'ի թիկանց և 'ի հանդիպոյ ունելով լերինս և զուարճալի վայրս: Գիւղս այս թէ պէտ և բազմամարդ, այլ անշուք շինուածով. 'ի շրջակայ վայրան բազում ուրեք գտանի կաւ կանաչագոյն:

Ծագումն և ստացումն գիտութեան:

Գիտութիւնն է պտուղ մարդկանց գիտողութեանն և արդիւնք փորձառութեան այլ և այլ ժողովրդոց, որոնք մէկմէկու յաջորդեր են երկայն պարագայիւք զարուց 'ի սկզբնաւորութենէ ընկերութեանց. իր ամբողջութիւնը

կը կացուցանէ այն բարոյական զարգացումն՝ առ որ տրուած է անունն քաղաքակրթութեան:

Հոգին վերահասու կ'ըլլայ զգայարանաց միջնորդութեամբն արտաքին առարկայից տպաւորութեանց, այն յարաբերութեամբք՝ որ ունին իրմով կենդանաւորած մարմնոյն հետ: Բանն հո-